

կղզիին մէջ մղուած պատերազմը մեծ ծաւալ կ'ստանար, երկու բանագնացներ՝ հայ ազնուական մը և Աղեքսանդրիոյ յոյն պատրիարքին փոխանորդը Փարիզ գացին, համոզելու համար Բէռ Օթոմանը, որ Արեւելքի դժգոհ քրիստոնեաներուն գլուխը անցնի, Սուլթան Մէհմէտ Դ.ի բանակներուն դէմ կռուելու առաջադրութեամբ: Յոյն պատրիարքը կը վստահեցնէր, թէ անգամ մը որ Օսմ. կայսրութեան Հայերն ու Յոյները ապստամբէին, Մոսկօֆները, Ուլանները և կայսրութեան միւս նահանգներու ժողովուրդները պիտի միանային իրենց (J. Mathorez. Revue des Etudes Arméniennes, T. 1. II. էջ 85): Ժ. Մաթորէզ կը կարծէ, թէ խնդրոյ առարկայ հայ ազնուականը պէտք է ըլլար Շազի Մուրատ (Chazi Murat) անուն անձը, հիմնուելով Փարիզի Ազգ. Մատենադարանը պահուած Քոլպէրի թուղթերուն մէջ գտնուող և 1666 Նոյեմ. 25 թըւականը կրող նամակի մը վրայ, որ կը հաստատէ թէ Աղեքսանդրիոյ պատրիարքին փոխանորդ Կոզմոս Մօրիս Բալէոլոկ Փարիզ գացած է, ընկերակցութեամբ Շազի Մուրատի: Վերոգրեալ հայերէն յիշատակարաններու վրայ հիմնուած՝ կրնանք այս Մուրատը նոյնացնել Բաղիշեցի մանտեսի կամ հաճի Մուրատի կամ Շահ Մուրատի հետ, որ 1666ին Փարիզ գացած էր որոշ առաքելութեամբ մը և չէր կրցած այլեւս Արեւելք դառնալ՝ վտանգուելու վախով, ու մինչև 1683 Փարիզ մնացած էր:

Ինչպէս տեսնուեցաւ, 1683ին հոն գտնուէին նաև Զաքարիա վրդ. Սիսիանցի, Հալէպցի Ղազարի որդին Յովսէփ, Էրզրումցի Յովհաննէսի որդին Գրիգոր և Խազանկէլէրցի կամ Ղազանճի Մուրատը և Ոսկան վարդապետի քեռորդի Սողոմոնը, որոնցմէ միայն վերջինը պատմութեան ծանօթ է: